ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2007 թվականի փետրվարի 22-ին

422 «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ»* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը «ավարտից» բառից հետո լրացնել «ոչ շուտ, քան 3 ամիս» բառերով:

Հոդված 2. Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակում՝

1) «1. Անվտանգության բնագավառ» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«	1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքավորումների արտադրություն	ՀՀԿ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
2.	պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքավորումների առևտուր	ԿՄ	Բ	-	-	-	-	Հ	Վ
3.	պայթեցման աշխատանքների կատարում	ԿՄ	Բ	-	-	-	Ո	Հ	-
4.	հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առևտուր	ԿՄ	Պ	-	-	-	-	-	-
5.	զենքի արտադրություն	ՀՀԿ	Բ	-	Փ	-	-	Հ	Վ
6.	զենքի առևտուր	ԿՄ	Բ	-	Փ	-	-	Հ	Վ
7.	թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի՝								
	-արտադրություն կամ պատրաստում	ՀՀԿ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
	-նոր թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի մշակում	ՀՀԿ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
	-պահպանում	ՀՀԿ	Բ	-	-	-	-	Հ	Վ
	-տեղափոխում	ՀՀԿ	Բ	-	-	-	-	Հ	-
	-բաշխում, բացթողում և իրացում	ՀՀԿ	Բ	-	-	-	Ո	Հ	Վ
	-արտադրության, պատրաստման, վերամշակման, իրացման, օգտագործման (այդ թվում՝ բժշկական) նպատակով ծեռքբերում	ՀՀԿ	Բ	-	-	-	-	Հ	-
	-գիտական և ուսումնական նպատակներով օգտագործում	ՀՀԿ	Բ	-	-	-	Ո	Հ	Վ
	-ցուցակներում ներառված պատրաստուկների ստացման նպատակով վերամշակում	ՀՀԿ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
	-օգտագործմամբ փորձաքննության անցկացում	ՀՀԿ	Բ	-	-	-	Ո	Հ	Վ
	-արտահանում կամ ներմուծում	ՀՀԿ	Բ	Ա	-	-	-	Հ	-
8.	դրամահատման, պետական մեդալների, շքանշանների պատրաստում կամ արտադրություն	ՀՀԿ	Բ	-	Փ	-	-	Հ	Վ
9.	պետական կնիքների, դրոշմակնիքների պատրաստում կամ արտադրություն	ՀՀԿ	Բ	-	Փ	-	-	Հ	Վ

10.	հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրում	ՀՀԿ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ ».

2) «2. Առևտրի բնագավառ» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«	2. ԱՌԵՎՏՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 710210000, 710221000, 710231000 ծածկագրերին դասվող բնական մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների առուվաճառք, ներմուծում, արտահանում, փոխադրում	ԿՄ	Պ	Ա	-	-	-	-	- ».

3) «3. Առողջապահության բնագավառ» բաժնի 2-րդ և 3-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

4) «5. Արժեթղթերի շրջանառության բնագավառ» բաժնի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել.

5) «7. Գյուղատնտեսության բնագավառ» բաժնի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

6) «9. Կրթության բնագավառ» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«	9. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացում	ԿՄ	Բ	Ա	-	-	-	-	-
2.	տարրական ընդհանուր կրթական ծրագրերի իրականացում	ԿՄ	Բ	Ա	-	-	-	-	-
3.	հիմնական ընդհանուր կրթական ծրագրերի իրականացում	ԿՄ	Բ	Ա	-	-	-	-	-
4.	միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթական ծրագրերի իրականացում	ԿՄ	Բ	Ա	-	-	-	-	-
5.	հատուկ ընդհանուր կրթական ծրագրերի իրականացում	ԿՄ	Բ	Ա	-	-	-	-	-
6.	նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի իրականացում	ԿՄ	Բ	Ա	-	-	-	-	-
6.1	միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում, բացառությամբ բժշկական միջին մասնագիտական ծրագրերի	ԿՄ	Բ	Ա	-	-	-	-	-
6.2	բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում, բացառությամբ բժշկական բարձրագույն կրթական ծրագրերի	ԿՄ	Բ	Ա	-	-	-	-	- ».

7) «10. Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառ» բաժնի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

8) «12. Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառ» բաժնում՝

ա. 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

բ. 9-րդ կետի առաջին, հինգերորդ և 11-րդ կետի չորրորդ տողերը հանել.

9) «13. Շրջակա միջավայրի պահպանության բնագավառ» բաժնի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.	վտանգավոր թափոնների՝ -վերամշակում -վնասազերծում -պահպանում -փոխադրում և տեղադրում	ՀՀԿ	Բ	Ա	Փ	-	Ո	Հ	Վ».

10) «14. Որակի, ստանդարտացման, սերտիֆիկացման, չափագիտության բնագավառ» բաժնի 2-րդ սյունակից հանել «և նորոգում» բառերը.

11) «16. Տրանսպորտի բնագավառ» բաժնում՝

ա. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.	միջազգային կանոնավոր օդային հաղորդակցության գործունեություն	ԿՄ	Բ	-	Փ	-	Ո	Հ	-».

բ. 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

12) «17. Քաղաքաշինության բնագավառ» բաժնում՝

ա. 1-ին և 2-րդ կետերի երկրորդ և յոթերորդ տողերը հանել,

բ. 1-ին և 2-րդ կետերի 2-րդ սյունակի առաջին տողերը «քաղաքացիական» բառերից հետո լրացնել «և արդյունաբերական» բառերով.

13) «17.1 Զբոսաշրջության բնագավառ» բաժնի 1-ին և 2-րդ կետերի 5-րդ սյունակները լրացնել «Ա» տառերով.

14) «18. Գործունեության այլ բնագավառներ» բաժնում՝

ա. 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

բ. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7.	Սննդամթերքի արտադրություն, այդ թվում՝								
7.1	թորած ալկոհոլային խմիչքների (բացառությամբ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների), ինչպես նաև 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ՝ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների) և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրություն	ԿՄ	Պ	Ա	-	-	-	-	-
7.2	«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների արտադրություն	ԿՄ	Պ	Ա	-	-	-	-	-

7.3	«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ՝ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի ապիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների արտադրություն	ԿՄ	Պ	Ա	-	-	-	-	Վ
7.4	գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրություն	ԿՄ	Պ	Ա	-	-	-	-	-
7.5	գարեջրի արտադրություն	ԿՄ	Պ	Ա	-	-	-	-	-»:

Հոդված 3. Սույն օրենքի 1-ին հոդվածը, 2-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ կետերը, 8-րդ կետի «ա» և «բ» ենթակետերը, 9-րդ, 10-րդ կետերը, 11-րդ կետի «բ» ենթակետը, 12-րդ կետի «ա» ենթակետը, 13-րդ, 14-րդ կետերն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերը, 11-րդ կետի «ա» ենթակետը, 12-րդ կետի «բ» ենթակետն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո նախկինում տրված լիցենզիաները պահպանում են իրենց իրավաբանական ուժը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ **Ռ. Քոչարյան**

2007 թ. մարտի 24
Երևան
ՀՕ-116-Ն